Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՎ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիպում ունեցավ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի, ԱԺ նախագահ Օլեգ Եսայանի, վարչապետ Անուշավան Դանիելյանի և ԼՂՀ կառավարության մի շարք անդամների հետ:

Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց ԼՂՀ իշխանությունների այցի առիթով և իր բարեմաղթանքն ուղղեց նրանց՝ ցանկանալով Արցախին ու արցախահայությանը խաղաղ ու բարօր կյանք:

ԼՂՀ նախագահը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարած ամեն մի այց նոր ուժ ու եռանդ է հաղորդում իրենց: ԼՂՀ նախագահը նաև հրավիրեց Վեհափառ Հայրապետին հովվապետական այցով վերըստին լինելու Արցախ աշխարհում, քանզի նմանատիպ այցելությունները ոգևորում են հայորդիներին՝ նոր ուժով ու եռանդով լծվելու բարօր կյանքի կերտմանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ